

Վարդան Զ. Պետրոսյան
Բանասիր. գիտ. թեկնածու

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՒԼ ՇՓԱԿԱՆ Խ (X)-Ի
ԱՊԱԺԱՄԱՆԱԿՅԱ ԵՎ ՏԱՐԱԺԱՄԱՆԱԿՅԱ
ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ*

Բանալի բառեր – խուլ շփական, հետնալեզվային, հին հունարեն, հին սլավոներեն, խեթալուվիական լեզուներ, բաղաձայնական տեղաշարժ, տիպաբանական մոտեցում, տարածամանակություն, կոշտ շունչ:

Մուտք

(նախաձևի հարցն ըստ ավանդական հայերենագիտության)

Ընդհանուր առմամբ պատմահամեմատական հայերենագիտության մեջ հյ. խ [x]-ի նախաձև է համարվում հ.-ե. *k^h հետնալեզվային շնչեղ խուլ հպականը¹: Հ. Աճառյանը, սակայն, նշում է խ [x]-ի հ.-ե. նախաձևերի շարք՝ *q (= *k²h)², *k, *kh (= *k²h, *q²h, *qh)³: Դրանք գործնականում արտացոլվել են նրա «Հայոց լեզվի պատմության» 1-ին մասի համապատասխան բառացանկում և «Հայերէն արմատական բառարան»-ի բառահողվածներում (հմմտ. խած-անել «խածել, կծել» < *khād-, խարել «այրել, դաղել» < *qr^o-, *qor-, խոյլ «ուռուցք, պալար» < *qheul-, խարոր «սխտոր» < *skodoro-)⁴: Գ. Զահուկյանի բառացանկը, որով մենք առաջնորդվում ենք, նշված բոլոր

* Հղվածն ընդունվել է տպագրության 20.02.2022:
1 Տե՛ս Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 234, Պեդերսոն Հ., Նպաստ մը հայ. լեզուի պատմության, Վիեննա, 1904, էջ 16, Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 61-65, Պախանցյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն. Հին շրջան, Եր., 1961, էջ 237, Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան (այսուհետ՝ ՀԼՊԼԺ), Եր., 1987, էջ 111-157:
2 Ըստ Հ. Աճառյանի՝ այլ հայեցակարգերում *q-ի համարժեքն է պարզ խուլ շրթնահետնաքմային *kw-ը (տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետ՝ ԼԶԼ), հատ. 6, Եր., 1971, էջ 526): Ըստ այդմ՝ *k2h-ն *kwh շնչեղ խուլ շրթնահետնաքմայինն է:
3 Տե՛ս նույն տեղում, էջ 583:
4 Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս I, Եր., 1940, էջ 54-56, նույնի՝ Հայերէն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), հատ. II, Եր., 1973 և այլն:

նախաձևերի փոխարեն ունի միայն **kh* (իմա՝ **k^h*)⁵: Բացառություն է *ձոխիլ* «խտորովել, շեղվել»⁶ բառը, որում *խ* [x]-ի նախաձևն է **l*-ն՝ **g^hoL-* (ըստ Յ. Պոկոռնու՝ **g^hoL-*)⁷: Ը. Աճառյանը *ձոխիլ*-ի ավելի հին ձև է համարում **ձոնիլ*-ը, ըստ այդմ՝ տեղի է ունեցել **l* > (**η/ɛ* >) *խ* անցում: Հետևաբար *ձոխիլ*-ի *խ* [x]-ն համեմատաբար ուշ շրջանի իրողություն է, և նշված անցումն էլ օրինաչափ է⁸:

**k^h* > *hյ*. *խ* [x] անցում դիտարկվում է հայերենի՝ *հ*-ե. ծագում ունեցող 47 բառի կազմում⁹, որոնց մի մասը՝ միննույն արմատից (հմմտ. *խսաղ*- (?) / *խսաղ*-ամ (?) (< **k^hal-*), *մուխ*-, *մխտն* / *մամուխ* (?) (< **muk^h-*)), իսկ մյուս մասը արմատի հերթագայական (հնչույթային) տարբերակներից բաղադրված ձևեր են, որոնք ոչ հազվադեպ վերաինաստավորվել են նոր բառերի (հմմտ. *խինդ* / *խինծ* / *խինծ* / *խ(ի)նջ*(-ոյ-ք), *խայթ* / *խէթ* / *խիթ* / *խոթ* և այլն): Հմմտ.

Խ < **k^h*. *խանսր* (*խանդ*) (< **k^hand-*), *խոյլ* (< **k^heul-*), *խարտն* (< **k^hore-* (?)), *խայթ* (> *խէթ*) (< **k^hai-t-*), *խիթ* «ցավ, հիվանդություն» (< **k^hē-* (?)), *խուղ* (*հիւղ*) (< **k^huko-*), *խութ* (< **k^hō-* (?)), *սխալ* (-ակ) (< **sk^hl-* (?)), *թա-թախտն* (< **tā-k^h-*), *զուխ*, -ոյ (< **ghōlukho-*), *մուխ*-, *մխտն* «1. մխում, սուզում. 2. շիկացած երկաթին ջուր տալը» (< **muk^h-*), «սահել, սահուն, լպրծուն», *մուխ*, -ոյ «ծուխ» (< *(*s*)*muk^ho-*), «ծխել, ծուխ» և այլն:

Ը.-ե. **k^h* > *hյ*. *խ* [x] անցում տեղի է ունեցել՝ ա) բառակազմում՝ ձայնավորին և երկբարբառին նախորդող դիրքում (հմմտ. **k^hor-* > *խոր-ովն*, **k^hak^ha-* > *խախ-անք* «քահ-քահ ծիծաղ», **k^hāid-* > *խայտ* «խատուտիկ, պիսակավոր», **k^heul-* > *խոյլ* «ուռուցք, պալար» և այլն), բ) երկու ձայնավորի միջև դիրքում (հմմտ. **g^holuk^ho-* > *զուխ* (-ոյ), *(*s*)*muk^ho-* > *մուխ* (-ոյ) «ծուխ»), գ) բառի (/ձևույթի) վերջնային դիրքում (հմմտ. **mak^h-* > *hյ*. *մախ* «նախանձ», **muk^h-* / (**meuk^h-*) > *մուխ* «մի բանի մեջ խոթելը. մխում»):

1. Ծագումնաբանական ընդհանրություններ

Հնդեվրոպական հին լեզուներից *x* հնչույթ տարբերակվել է հին հունարենում (*χ*), խեթերենում (*ḫ*), հին պարսկերենում (*x*), ավեստայում (ներկայացված էր երկու հնչյունական տարբերակով՝ հետնալեզվային շփա-

5 Տես **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 111-157: Հմմտ. **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010:

6 Տես «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. II, Եր., 1981, էջ 160:

7 Տես **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 129:

8 Հ.-ե. **l* > *hյ*. *η* (*l*) անցման մասին տես **Պետրոսյան Վ. Զ.**, Հին հայերենի / (l) և η (l) ձայնորդների ծագումը և հնչաբանական արժեքայնությունը, «Վեմ», Եր., 2017, N 3, էջ 97-105:

9 Վիճակագրությունը ըստ **Ջահուկյան Գ. Բ.**, ՀԼՊՆԺ, էջ 111-157:

կան խուլ՝ *x*, և շրթնայնացած՝ *x^y*)¹⁰, ընդհանուր գերմաներենում (դարձյալ երկու տարբերակով՝ **x* և **x^y*)¹¹, հին վերին գերմաներենում (*ch*), հին իռլանդերենում (*ch*), հին սլավոներենում (*x*), լիտվերենում (*x*): Նշված լեզուների մի մասի *x*-երը, սակայն, նույնարժեք չէին հնչարտաբերական բնութագրերով: Այդ երևույթն ակնհայտ է ավեստայի և ընդհանուր գերմաներենի երկու տիպի *x*-երի դեպքում՝ հետնալեզվային շփական (*x*) և շրթնային (*x^y*), որոնցից երկրորդի հնչարտաբերական, մասնավորապես ձայնաբանական հատկանիշների մասին որոշակի ոչինչ հայտնի չէ: Չի բացառվում, որ այդ հնչյունները տարբեր էին ոչ միայն արտաբերության տեղով, այլև եղանակով, այնպես, ինչպես որ *h* (*h*)-ն սովորաբար խուլ է, բայց առանձին դեպքերում տարբերակում են նաև ձայնեղ (ըստ Հ. Աճառյանի՝ «թրթռուն») *h* (*h*): Այդպիսի հնչույթ տարբերակվում է, օրինակ, հայերենի որոշ բարբառներում (Կարնո, Մշո, Շապին-Գարահիսարի, Արաբկիրի, Սեբաստիայի, Շատախի, Մոկսի, Արարատյան), երբեմն էլ՝ միայն դրանց առանձին խոսվածքներում (Բրգսիկի, Կյուրինի, Խնուսի, Ալաշկերտի, Աշտարակի և այլն), այսինքն՝ բարբառի ընդգրկման ոչ ամբողջ տարածքում: Ձայնեղ *h* (*h*)-ն, որը գրությամբ նշանակվում է *ḥ*-ով կամ *h'*-ով, գործառել է բացառապես բառասկզբի դիրքում՝ գրաբարյան *j* (*y*)-ի փոխարեն (հմմտ. *j**h**z**ել* > *h'**h**z**ել*), կամ եղել է հավելական հնչյուն բառասկզբի ձայնավորից առաջ (հմմտ. *աչք* > *h'**աշկ* (Ար.), *h'**աչք* (Կրն.), *առու* > *h'**առու* (Ար.), *ընկեր* > *h'**ընգէր* (Կրն., Ար.) և այլն)¹²:

Համեմատական հնդեվրոպաբանության տվյալների համաձայն՝ ընդհանուրհնդեվրոպական հետնալեզվային շնչեղ խուլ հպականից (**k^h*) են սերել, օրինակ, հին սլավոներենի, հին հունարենի և հին իռլանդերենի [*x*]-երի (գրային *χ* և *ch*) որոշակի դրսևորումներ (հմմտ. (**sg^hara-* >) **sk^hara-* > հն սլավ. *xpaδpъ* «խիզախ», եկեղեցասլավ. *xpaδpъи* (< **xōrb-r-*), **k^hakh-* «ձյուղ» > հն սլավ. *coxa* «ծոված ձյուղ, որ իբրև արոր է ծառայում», ռու. *coxa* «արոր», **k^ha-k^ha-* > հուն. *καχάζω* «բարձրաձայն ծիծաղում եմ», հն սլավ. *xoxomъ* «քրքոց», ռու. *xoxomatъ* «քրքջալ», *(*s*)*mu^ho-* > հուն. *σμήχομαι* «մարմնադկրակի վրա այրվել», *σμήχω* «դանդաղ այրվում եմ», իռլնդ. *múch* «ծուխ», հն վ. գերմ. *smouch* «ծուխ», **mu^h-* > հյ. *mfut* «մի բանի մեջ խոթել», հուն. *μυχός* «ներսը, խորք», *μύχιος* «խոր, ներքին» և այլն)¹³: Սլավոնական լեզուներում բնիկ *i*, *u*, *r*, *k* հնչյուններից հետո *x*-ի է անցել նաև *h*-ն. առաջնային՝ նախա-

10 Տե՛ս **Расторгуева В. С.**, Древнеиранские языки (авестийский и древнеперсидский), «Языки Азии и Африки», т. II, М., 1978, էջ 22-23:

11 Ընդհանուր գերմաներենի **x*-ի և **x^y*-ի գոթական համարժեքներն են համարվում *h*-ն և *hw* (*hw*)-ն, որոնք *երախային* (*pharyngeal/фарингальный*) շփականներ էին (տե՛ս **Гухман М. М.**, Готский язык, М., 1958, էջ 60-63):

12 Տե՛ս **Աճառյան Հ.**, ԼՔԼ, հատ. 6, էջ 171-174, **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 53-60, 266, **Մուրադյան Հ. Ղ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն (հնչյունաբանություն), հատ. I, Եր., 1982, էջ 276, 314-322, **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառ, Եր., 1989, էջ 74:

13 Սլավոնագիտության մեջ, սակայն, միակարծություն չկա սլավ. *x*-ի *h*-ն. **kh*-ից սերված լինելու վերաբերյալ (տե՛ս **Хамбургаев Г. А.**, Старославянский язык, М., 1974, էջ 140-141):

լեզվյա, եթե վերջինին չի հաջորդել որևէ հպական (հմնտ. **aus-is* > հն սլավ. *oyxo* «ականջ», ու. *yxо*. մյուս լեզուներում հ.–ե. **s*-ը կա՛մ պահպանվել է, ինչպես՝ լիտվ. *ausis*, գոթ. *ausō*, հուն. *οὔς*, կա՛մ անցել է *r*-ի (ռոտացիզմ), ինչպես՝ լատ. *auris*, **sausos* «չոր» > հն սլավ. *coyxъ* (*suxъ*), **teis-* > հն սլավ. *muxъ* (*tixъ*), ու. *muxъi* «խաղաղ», **pors-* > ու. *nopox* «վառող» և այլն): Ենթադրվում է, որ հ.–ե. **s* > սլավ. *x* անցումը տեղի է ունեցել ճ-ի միջանկյալ աստիճանով, այն է՝ **s* > *š* > սլավ. *x*¹⁴: Երկրորդային **s₂*-ը, որն առաջացել է հ.–ե. հետնալեզվային հպականների քմայնացման հետևանքով (**k' > s*), *x*-ի չի անցել (հմնտ. **dekm_o(t)* > հն սլավ. *desamъ* [desjat'] «տասը», **peik-* > ու. *nucamъ* «գրել» և այլն)¹⁵: Ը.–ե. **s(u)* > սլավ. *x(ъ)* անցում տեղի է ունեցել հատկապես քերականական վերջավորությունների մեջ, մասնավորապես՝ նրգ. հլ. հգն. թ. (հմնտ. **ul_o k^hoisu* > հն սլավ. *вльцѣхъ* «գայլերով», սնսկ. *vr_o 'kešu*, լիտվ. *vilkuosē*)¹⁶ և սիզանտիկ աորիստի եզ., հգն. և երկ. թվերի 1-ին դեմքերի ձևերում (հմնտ. **rēksom* > *pъxъ* «(ես) ասացի», **rēksomos* > *pъxомъ* «(մենք) ասացինք», **(....?)* > *pъxовѣ* «(մենք երկուսով) ասացինք»)¹⁷: Ը.–ե. աորիստի երկակի թվի 1-ին դեմքի համար ընդհանուրինդեվրոպական միասնական նախաձև չի վերականգնվում այդ ժամանակաձևը պահպանած հին հնդկերենի, հին հունարենի և հին սլավոներենի համապատասխան վերջավորությունների համար մեկ ընդհանուր նախաձև վերականգնելու դժվարությունների պատճառով¹⁸:

2. Տիպաբանական դիտարկումներ

Ոչ հնդեվրոպական և հնդեվրոպական հին լեզուներից կատարած փոխառություններում դիտարկվում են հյ. *ju* (*kh*)-ի հետևյալ տիպաբանական զուգահեռները:

14 Տես Պետերսըն Հ., նշվ. աշխ., էջ 50, Мейе А., Общеславянский язык, М., 1951, էջ 29, Селищев А. М., Старославянский язык, ч. I, М., 1951, էջ 186:
 15 Այս հնչյունական (հնչյութային) համապատասխանությունն առաջինը ձևակերպել է Հ. Պետերսընը, ուստի և այն ստացել է «Պետերսընի օրենք» անվանումը (տես Журавлев В. К., Педерсена закон, «Лингвистический энциклопедический словарь», М., 1990, էջ 369): Պետերսընի օրենքը, սակայն, ավելի լայն ընդգրկում ունի: Այն վերաբերում է վերոհիշյալ երևույթին ոչ միայն սլավոնական, այլև հնդիրանական և բալթավալոնական լեզուներում: Ավելին այդ օրենքի դրսևորումը Հ. Պետերսընը մատնանշում է նաև իր հայերենում ի դեմս *ne* հոլովման պատկանող *r* (*r*) ձայնորդաանգով որոշ բառերի (հմնտ. բարձր, թանձր, կարճր, մանր, բաղջր, մեղր), որոնց *r*-ն, նրա կարծիքով, ծագել է հ.–ե. անվանական հոլովի (*nominativus*) **-s*-ից (հմնտ. «ես յի վերջատառ st ծագած ըլլալն ընդունելու ավելի մեկ են» (Պետերսըն Հ., նշվ. աշխ., էջ 50)): Ը.–ե. այդ հնչյունը, սակայն, նույնական չէր հյ. *-p* (*-k*) հոգնակերտի հանգած հնչյունի հետ և ունեցել է *z* (*š*) հնչում (հմնտ. «Ըստ իս հաւանական է թէ *z* ձայնն ըլլար» (նույն տեղում)): Ըստ այդմ, նրա կարծիքով, օրինակ, հյ. *oni* «հարս» բառի սեռ.-ի ձևում *-rj* վերջից առաջ, պիտի եղած լինի *z*, այն է **onizj* (**noisjōj*), որը երևում է «արեւելեան հնդեւրոպականի» ցեղակից ձևերից (հմնտ. սնսկ. *smušā*՝, ռուս. *сноха* «հարս») (տես նույն տեղում, էջ 50-51):
 16 Տես Мейе А., Общеславянский язык, էջ 28, Савченко А. Н., Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, էջ 198, Хамбургаев Г. А., նշվ. աշխ., էջ 140-141:
 17 Տես Мейе А., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938, էջ 242-244, նույնի Общеславянский язык, էջ 200-206, Селищев А. М., Старославянский язык, ч. II, М., 1952, էջ 166-172, Савченко А. Н., նշվ. աշխ., էջ 278-279, Семерень О., Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 300-301, Хамбургаев Г. А., նշվ. աշխ., էջ 156-157, 270-276, Горшков А. И., Старославянский язык, М., 1974, էջ 164-165, Вайан А., Руководство по старославянскому языку, М., 1952, էջ 255-263:
 18 Տես Мейе А., Введение ..., էջ 242-244, Савченко А. Н., նշվ. աշխ., Семерень О., նշվ. աշխ.:

Մեմսկան լեզուներ > հայերեն. **h/ħ(h)/h** > **ju** (հմնտ. արաբ. *aḥmaq* «հիմար, տխմար» > հյ. *uḥmaṣ* «հիմար, տխմար», ասոր. *ḥānūṭā* > հյ. *juṣūn* (*huṣūn*), ասոր. *ḥarmān(ā)* «օձ» > հյ. *juṣur* (*huṣur*) «ղև, սատանա, չար օձ», արամ. (ասոր.) *ḥarbā*, եբր. *ḥareḇ* > հյ. *juṣur* (-ի) «սուր, թուր», արաբ. *ḥil'a(t)* > հյ. *ju(h)uṣ* «պարզև տրված զգեստ. կանացի շղարշ», ասոր. *ḥūldā*, արաբ. *ḥuld* > հյ. *juṣur* (-ի) (*juḥur*), արամ. *ḥm'*, (ասոր.) *ḥma'* «թթվել, խմորվել», եբր. *ḥmš*, արաբ. *ḥamḍ* > հյ. *juṣur* (-ոյ), ակկադ. *ḥurru*, արամ. *ḥōrā*, (ասոր.) *ḥurā*, եբր. *ḥōr*, *ḥur* «ծակ», արաբ. *ḥurr* «ծակել» > հյ. *juṣn* «ծակ, խոռոչ, ծերպ, խրամ», արաբ. *ḥḥr* «կախարդել. հիացնել», *siḥr* «կախարդանք, դյութանք» > հյ. *juṣur* «հիսնալ, գարմանալ, սքանչանալ», ակկադ. *puḥḥu(m)* «փոխանակել», *puḥu(m)* «փոխանակում, փոխարինում» > հյ. *juṣu* (-ոյ), *juḥu*, արաբ. '*ahl*, *yahlō* «ցեղ», արամ. '*ahēlā* «ընտանիք, ազգականներ. մարդիկ», եբր. '*ōhel* «վրան», ակկադ. *ālu* «տեղ, վայր, քաղաք» > հյ. *juḥu* (-ի, -ից) «փականք. օղակ. ունեցվածք. ցեղ, գարմ, մարդիկ»): (' > **ju** (հմնտ. ասոր. '*azrurā* > հյ. *juṣur* (-ոյ), արամ. (ասոր.) '*arbālā* «մաղ», '*arbēl* «մաղել» > հյ. *juṣur* «մաղել. տակնուվրա անել. վնասել»): **q** > **ju** (հմնտ. արաբ. *aḥmaq* «հիմար, տխմար» > հյ. *uḥmaṣ* «հիմար, տխմար», ասոր. *bāqra*, եբր. *bāqar* «արջառ. կով. ցուլ», արաբ. *baq(a)ra(t)* «եգ. կով» > հյ. *juḥur* (-ի, -ից), ուշ՝ *juḥur* «տավար, արջառ, նախիր. ինչք»): **k/ḵ/k** > **ju** (հմնտ. եբր. *koled* > հյ. *juṣur* (-ի), եբր. *zəḵar*, *seḵer*, *sāḵār* «վարձ», արաբ. *sakarāt* «բանվոր», եթովպ. *səḵūr* «վարձված» > հյ. *juṣur* «վարձ»):

Կովկասյան լեզուներ > հայերեն. **x** > **ju** (հմնտ. մեգր. *xomula-* «չոր», ճան. *xom(b)u-la-*, վրաց. *xmel-* (< վրաց.-գան. **qmēl-* / < **qam-* «չորանալ») > հյ. *juṣur* (*juṣur*), մեգր., ճան. *xoc'* «կեղևը հանել», վրաց. *xwec'* «տաշել» > հյ. *juṣur* «կանեփի մնացորդ»): **ṣ** > **ju** (հմնտ. մեգր., ճան. *ṣeḵ-* (< **ṣoḵ-*) «խոզ» > հյ. *juṣur* «խոզ», ճան. *ṣorma-* «բացվածք, ծակ», վրաց. *ṣrma-* «խոր» (< վրաց.-գան. **ṣarma-*) > հյ. *juṣur* «պատի վրա բացվածք», վրաց. *ṣit'in-*, ճան. *ṣit'in-* (*uṣit'in*. *xic'in-*) «խտղել» > հյ. *juḥur*, *juḥur*):

Խուրդերեն > հայերեն. **ḥ** > **ju** (հմնտ. *ḥaluli* «ինչ-որ պտուղ» > *juḥur*, *ḥinzuri* «խնձոր» > *juṣur*, *ḥurri* > *juṣur*):

Ուրարտերեն > հայերեն. **ḥ** > **ju** (հմնտ. *ḥarḥar-š(-u-)* > *juḥur* «խարխարել» > *juḥur*, *ḥurri* > *juṣur*):

Խեթալուվիական լեզուներ > հայերեն. **ḥ (ḥ)** > **ju/(h)** (հմնտ. *ḥalanta-* «գլուխ» > *juḥur* (*huḥur*) «անասունի չորացած գանգ», *ḥalāi-* «շարժվել (?)» > *juḥur* «շարժվել, գնալ. արշավել, վազել», ^E*ḥetā-*, ^E*ḥeti-* «դամբարան» > *juḥur* «անկողին» (*«հանգստավայր»), *tuḥur(i-)* «ծուխ (?)» > *juḥur* և այլն):

Իրանական լեզուներ > հայերեն. *x/h/ḫ/ḥ/γ > ju* (հմնտ. (*ā-xvar*) մ.պ. *āxvar*, պ. *āxūr* > հյ. *uḫunn*, ավ. *hvarəz* «բարեգործ», մ.պ. *xvārak* «քաղցրություն, երանություն» > հյ. *uḫunḫ* (-ի), (**bhag-to-* > **bhak-to-* >) ավ. *baxta* «բաժին, վիճակ, բախտ», մ.պ., պ. *baxt* > հյ. *puḫur* (-ի), մ.պ. *dušxēm*, պ. *dušxīm* «չարաբար» > հյ. *ḡdjuḫ* (*ḡdjuḫ*) «ղաժան», մ.պ. (պագ.) *draxt*, պ. *diraxt* > հյ. *ḡruḫur* (ի-ա), ավ. *xara-*, պ. *xar* «էշ» և *az-* «քշել» > հյ. *juḫurāqān* (ի-ա), (**xōδ >*) ավ. *xaoḡa* «սաղավարտ», հ.պ. *xauda* «գլխարկ», պրթ. *xwd*, պ. *xōy* «սաղավարտ» > հյ. *juḫur* (-ի) «գլխարկ, թագ», հ.պ. *ḡūzā*, մ.պ. *Xužistan*, պ. *Xužistan*, *xūzī* «խուժիստանցի» > հյ. *juḫ* «վայրենի, բարբարոս», պրթ. *nḡšyr*, մ.պ. *naxčīr* «որս», սողդ. *nγš'yr* «վայրի կենդանի» > հյ. *juḫ* «կոտորած (որսի, պատերազմի ժամանակ)», մ.պ. *vaxš* «տոկոս», *vaxšī tan* «մեծանալ» > հյ. *juḫ* (-ի) «տոկոս» և այլն):

Վերոհիշյալ օրինակները հիմք են տալիս անելու հետևյալ դիտարկումները:

1) Ինչպես հնդեվրոպական, այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուներից հայերենի կատարած փոխառությունների *ju* (x)-ի համարժեքները համապատասխան լեզուներում ունեն խուլ և հետնալեզվային հատկանիշներ, որպիսին է նաև հյ. *ju* (x)-ն: Ավելին՝ դրանցից շատերն ունեն [x] կամ դրան սոտ հնչարտաբերություն (հմնտ. [ḫ], [ḥ]): *H* [h]-ն և *x* [x]-ն լծորդ հնչույթներ (/հնչյուններ) են, և ոչ հազվադեպ բառը *h* ([h]) // *x* ([x]) հերթագայական տարբերակներով հանդիպում է ինչպես միևնույն լեզվաճյուղի լեզուներում (հմնտ. ավ. *hvarəz* «բարեգործ», մ.պ. *xvārak* «քաղցրություն, երանություն» > հյ. *uḫunḫ* (-ի), (**rax-* >) սողդ. *rγ'h*, յաղնոք. *rax* «բերան, երախ» > հյ. *teruḫ* «բերան, երախ» (բրբռ. *nḡju*), ավ. *taoxman-* «սերմ, սաղմ. ազգակցություն», հ.պ. *taumā* «ցեղ, տոհմ», մ.պ. *tōhm* «սերմ», պ. *tuxm* «սերմ» > հյ. *ḡnhul* (ի, ի-ա) և այլն), այնպես էլ միևնույն լեզվի գրական և բարբառային տարբերակներում (հմնտ. գրբ. հյ. *juḫunḡ* > *huḡunḡ* (Ալշ.), *huḡunḡ* (Ազլ., Շմ.), *huḡunḡ* (ՆՆխ.), *huḡunḡ* (Հմշ.) և այլն, *juḫur* > *huḡur* (Ազլ.), *huḡur* (-ունգ) (Ռ.), *duḡjuḫ* > *duḡ'huḡ* (Ազլ.), *puḡuḡju* > *puḡ'guḡ* (Ազլ.) և այլն)¹⁹: Կա նաև հակառակ՝ *h* (*h*) > *ju* (*x*) անցումը, որը գործառել է մասնավորապես Վասպուրականի և Պարսկահայքի տարածաշրջանների բարբառներում (հմնտ. գրբ. հյ. *huḡ* > *juḡ* (Վն., Մկ., Մրղ., Ջղ., Սլմ.), *juḡ* (Ոզմ.), *huḡur* > *juḡur* (Վն., Մկ.), *juḡur* (Մրղ.), *juḡur* (Ոզմ.), *huḡur* > *juḡur* (Վն., Մկ., Մրղ., Ջղ., Սլմ.), *juḡur* (Ոզմ.), *ḡruḡju* > *ḡruḡju* (Մրղ.) և այլն)²⁰: Նշված բարբառներում *h* (*h*) > *ju* (*x*) հնչյունափոխությունը, ըստ Գ. Զահուկյանի, ենթաշերտային երևույթ է, մասնավորապես՝ «ուրարտական ազդե-

19 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. II, էջ 321-322, 404-405, Ույնի Բնություն Ազուլիսի բարբառի, Եր., 1935, էջ 102-104:

20 Տե՛ս Աճառյան Հ., ՀԱԲ, հատ. III, Եր., 1977, էջ 31-32, 59-60, 94, Ույնի Բնություն Վանի բարբառի, Եր., 1953, էջ 64-68, Աղայան Է., Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 89:

ցույցան արդյունք»²¹: Մյուս բարբառները երկու դեպքում էլ պահպանել են գրաբարյան բառաձևի հնչույթը, այսինքն՝ *h* [*h*]-ն մնացել է *h* [*h*], իսկ *hu* [*x*]-ն՝ *hu* [*x*]:

2) *Q/к/к/к > hu [x]* անցումները, ըստ ամենայնի, տեղի են ունեցել արտաբերության տեղի հատկանիշի ընդհանրության հիման վրա (բոլորն էլ հետնալեզվային են): Այդ հնչյունների արտաբերության ժամանակ անհետացել է փականը, որը հպականների արտաբերության բնութագրական հատկանիշն է, և հնչյունը սկսել է արտաբերվել ձայնաձեղքի պատերին շփվելով:

3) *γ-ն* հնչույթաբանորեն հետնալեզվային ձայնեղ հպականի՝ *g*-ի հետնաքմային շփական տարբերակն է, վերջինի հետ ազատ փոփոխական հարաբերության մեջ է, ունի երախային [*h*]-ին մոտ (վերջինը կա, օրինակ, ուկրաիներենում և բելառուսերենում)²², բայց ոչ նույնական հնչարտաբերություն: Հպական *g* հնչույթի հետնաքմային շփական արտաբերությունը՝ [*γ*], բնորոշ է մասնավորապես ռուսերենի հարավվելիկոռուսական (*южнославянский*) բարբառներին (հմմտ. գր. ու. *нога* «ոտը» – [*naga*'] և [*naγa*'], գր. ու. *Благо* «բարություն» – [*bla'go*] և [*bla'γa*]): Բառավերջի դիրքում *z* (*g*)-ն արտաբերվում է [*x*] (հմմտ. *ноз* [*nox*], *блаз* [*blax*])²³: Ըստ Ս. Բեռնշտեյնի՝ «... այժմ երախային [*h*] ունեցող բոլոր սլավոնական լեզուներն անցել են [*γ*]-ի փուլով»²⁴: Իսկ Ֆ. Ռանովշը [*γ*]-ի և [*h*]-ի փուլերի միջև անցումային աստիճան է համարել [*x*]-ն, հետևաբար ամբողջական շղթան բաղկացած է [*g*] > [*γ*] > [*x*] > [*h*] հաջորդական օղակներից²⁵:

4) (‘)-ով նշանակվում է *լոշտ գրոհը* (*glottal catch / кнаклауи*) կամ *լոշտ շուչը* (*Spiritus asper / твердое дыхание*), ըստ էության՝ դարձյալ [*h*]-ն, ինչպես հին հունարենում, երբ այդ նշանը դրվել է բառասկզբի ձայնավորի վրա (հմմտ. հուն. *ἡμέρα* [*hemera*] «օր», *ἵππος* [*hippos*] «ստուգ, ձի», *ὕλη* [*hule*] «անտառ, ծառեր» և այլն): Տիպաբանական առումով ուշագրավ է, որ միջանկյալ *x* [*x*] աստիճան է ենթադրվում ընդհանուրագրաֆիննական **k* → հունգ. *h* հնչույթային անցման համար՝ **k* > (*k* ' > *x* [*x*]) > *h* (հմմտ. ֆինն. *kala*, մար. *kol*,

21 Տե՛ս **Ջահուկյան Գ. Բ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 267:

22 Տե՛ս **Серебрянников Б. А.**, Вероятностные обоснования в компаративистике, М., 1974, էջ 139:

23 Տե՛ս **Аванесов Р. И.**, Очерки русской диалектологии, ч. I, М., 1949, էջ 136-143:

24 **Бернштейн С. Б.**, Очерк сравнительной грамматики славянских языков, М., 1961, с. 293:

25 Տե՛ս նույն տեղում: Սլավոնագիտության մեջ խիստ բազմազան, հաճախ էլ հակասական տեսակետներ են արտահայտվել [*γ*]-ի առաջացմանը հանգեցնող հնչարտաբերական գործընթացների բնույթի (հնչույթաբանական՝ էին, թե՞ հնչյունաբանական), պատճառների, ինչպես նաև [*g*] > [*γ*] անցման ժամանակի վերաբերյալ: Ոմանք [*γ*]-ի առաջացումը վերագրել են նախապատմական ժամանակներին (Չեռնիս, Տրուբեցկոյ): Ըստ Ն. Տրուբեցկոյի [*g*] > [*γ*] անցումը տեղի է ունեցել «հետնախալավոնական» շրջանում (մոտավորապես մ.թ. առաջին դդ.) նախքան սլավոնական ռճգային և գերկարճ ձայնավորների անհետացումը (տե՛ս **Трубецкой Н. С.**, К истории заднеболотных в славянских языках, **Մուկի**՝ Избранные труды по филологии, М., 1987, էջ 171): Ուրիշները (Տրավնիչեկ, Սազոն, Բարսեղ, Ստանիսլավ) այդ անցման ժամանակագրությունը տեղադրում են XII-XIV դդ. միջև (տե՛ս **Бернштейн С. Б.**, նշվ. աշխ., էջ 294-296): Վ. Աբաևը սլավոնական լեզուներում «*γ* (*h*) հնչույթի» առաջացումը համարել է ենթաշերտային երևույթ «սլյուբա-սարմատյան խոսքի ներդրում սլավոնականում», որովհետև մեծապես համընկնում են, մի կողմից, «սլավոնականում *γ* (*h*) հնչույթի», իսկ մյուս կողմից՝ «սլյուբա-սարմատյան տեղանվանագիտության և սլյուբա-սարմատյան մշակույթի հուշարձանների տարածման արեալները» (տե՛ս **Абаев В. И.**, О происхождении фонемы *γ* (*h*) в славянском, «Проблемы индоевропейского языкознания», М., 1964, էջ 115-121): Այլ կերպ, ըստ Վ. Աբաևի, սլավոնական լեզուներում *γ* (*h*)-ն իրանական ազդեցության հետևանք է:

հունգ. *hal* «ծուկ», ֆինն. *kolme*, մար. *kum*, հունգ. *ha'rom* «երեք» և այլն)²⁶, ինչը նույնպես վկայում է հետնալեզվայնության ընդհանուր հիմքով բնութագրվող հնչյունների (/հնչույթների), այդ թվում՝ *կոշոր շունչի* (՝) ինչպես հերթագայելիության, այնպես էլ հնչունափոխական անցումների մասին: Ընդ որում, ըստ արտաբերության եղանակի, այդ հնչյունների մեջ կային և՛ հպականներ (*k*), և՛ շփականներ (*h*, *x*, ՝):

5) Սեմական լեզուներից փոխառյալ «աղխ» բառում տեղի է ունեցել *խ-ղ* դրափոխություն, այսինքն՝ սկզբնական ձևը եղել է **ախղ*, որովհետև *խ. ղ* (*չ*)-ի համարժեքն է օտար *l*-ն: Հետևաբար տվյալ դեպքում ևս *խ. խ* (*չ*)-ի համարժեքն է *h* (*h*)-ն (հմմտ. արար. **ahl*, *yahlō* «ցեղ», արամ. **ahēlā* «ընտանիք, ազգականներ. մարդիկ», եբր. **šhel* «վրան», ակկադ. *ālu* «տեղ, վայր, քաղաք»): Այդ մասին են վկայում նաև հետևյալ զուգահեռները, որոնցում *խ. ղ* (*չ*)-ի դիմաց սեմական լեզուներն ունեն *l* կամ *r* (*r*), բայց ոչ՝ *h* (*h*) (հմմտ. ասոր. *abīlā* > *խ. աբեղայ* (-ի), ասոր. *ālšā* > *խ. աղց* (-ի, -ից) «կարիք», եբր. *mīkšēlā* «ոչխարի փարախ» > *խ. մակաղ* «ոչխարի փարախ», ակկադ. *kudurru* «սահման. սահմանաքար» > *խ. կոթող* (-ի) և այլն):

6) Թեպետև հունարենն ունի [*x*] հնչյուն (/հնչույթ)՝ *χ*, իսկ լատիներենում [*x*] հնչյուն արտաբերվել է հունական փոխառություններում, որը գրությամբ նշանակվել է *ch*-ով (հմմտ. *chirurgicus* [xirurgikus] «վիրաբուժական», *chronica* [xronika] «տարեգրություն», *schola* [sxola] «դպրոց» և այլն), բայց և այնպես, այդ լեզուներից հայերենի կատարած փոխառությունները մեզ հետաքրքրող խնդրի տեսանկյունից կարևորություն չունեն դրանցում *խ* (*չ*) չլինելու պատճառով:

Այսքանով, իհարկե, հիմնահարցի քննությունը չի կարող սպառված համարվել, եթե երևույթը դիտարկենք ավանդական հնդեվրոպաբանության մեջ ընդունված «բաղաձայնական տեղաշարժի», մասնավորապես՝ հպականների տեղաշարժի տեսանկյունից: Հայտնի է, որ գերմանականից հետո հայերենը հնդեվրոպական երկրորդ լեզուն է, որին վերագրվել է «բաղաձայնական տեղաշարժի» ամբողջական շրջափուլ: Իրականում, սակայն, հ.-ե. հպական բաղաձայնների տեղաշարժը հետևողականորեն տեղի է ունեցել միայն ընդհանուրգերմանական լեզվում²⁷: Բացի այն, որ հայերենում հպականների գրեթե բոլոր հիմնական կարգերում՝ **g^h*, **g*, **k^h*, **k* (ըստ ավանդական հարացույցի), տեղ են գտել «տեղաշարժի» սկզբունքից շեղումներ²⁸, հետնալեզվային շնչելի խուլերի կարգում այդ շեղումն առավել քան ակնհայտ է: Նախ՝ հ.-ե. շնչել

26 Տե՛ս Серебренников Б. А., նշվ. աշխ., էջ 118-119:

27 Տե՛ս Мейе А., Основные особенности германской группы языков, М., 1952, էջ 35-41, Прокош Э., Сравнительная грамматика германских языков, М., 1954, էջ 37-43, Бенвенист Э., Проблемы армянского консонантизма, «Вопросы языкознания», 1961, N 3, էջ 38:

28 Ոչ պատահականորեն նույնիսկ «տեղաշարժի» սկզբունքին հետևողները այդ հասկացությունը կիրառում են վերապահումներով (տե՛ս Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 82, նույնի՝ Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 45):

խուլ շրթնային և ատամնային հպականները, համապատասխանաբար՝ **p^h* և **t^h*, բոլոր դիրքերում՝ բառակցքում՝ ձայնավորներից առաջ, երկու ձայնավորների միջև և բառավերջում՝ ձայնորդից հետո, հայերենում մնում են նույնը, այն է՝ **p^h* = *ph* (*p^h*), **t^h* = *th* (*t^h*), հետևաբար «տեղաշարժի» մասին խոսք լինել չի կարող (հմնտ. **p^huk-* > *փոք* «շնչելը, քամի», **dop^h-* > *փոփ(-ել)* «ծեծել, կոխտել», **meu-t^hi-* > *մոյթ* (-ի, -ից) «նեցուկ», **p^hamp^h-* > *փամփուշտ* «միզապարկ», **por-t^hu-* > *որթ* (-ու) «հորթ» և այլն)²⁹: Երկրորդ՝ հետնալեզվային շնչել խուլ հպականը՝ **k^h*, առաջին երկու դիրքերում անցնում է *ju* (*x*)-ի, որը տեղաշարժ չէ, այլ, ինչպես վերը տեսանք, որոշակի հնչարտաբերական ընդհանրությունների հիմունքով տեղի ունեցած հնչունական (/հնչույթային) անցում, իսկ բառավերջում՝ ձայնորդներին հաջորդող դիրքում, նրա «վարքագիծը» առհասարակ անորոշ է³⁰: Ըստ ամենայնի՝ *h*-*ե*. **k^h* > *hj*. *ju* (*x*) անցումը հնչունաբանական գործընթացի արդյունք է, այլ ոչ թե հնչույթաբանականի: Ինչպես նշում է Ա. Մեյեն, շնչել խուլ հպականը, ոչ շնչել խուլ հպականների համեմատությամբ ունենալով արտաբերական պայթյունի ավելի թույլ աստիճան, հետնալեզվային դիրքում կորցրել է հպումը և վերածվել շփականի³¹: Կազմավորված նոր հնչունական էֆեկտը, սակայն, չի վերածել կոկորդային (հագագային) շունչի (՝ կամ *h*), որովհետև արտաբերվել է հետնալեզվային հպականներին բնորոշ *լեզվակային* (*uvular / язычковый*) դիրքում:

Եզրակացություն

Այսպիսով՝ ինչպես տարածամանակյա, այնպես էլ ապաժամանակյա հայեցակետերով իրականացված քննությունները բավարար հիմք են տա-

29 Բառակցքի դիրքում **h*-ով օրինակներ չեն վերականգնվում (տե՛ս Джаукян Г. Б., Сравнительная грамматика армянского языка, էջ 52):

30 Հ.-Ե. հպականներին առնչվող տարաբնույթ հարցերի մենք անդրադարձել ենք հատուկ այդ հնչույթների և դրանց հայերեն համարժեքների քննությանը նվիրված հոդվածներում (տե՛ս Պետրոսյան Վ., Հայական բաղաձայնների հնդեվրոպական և հայկական համակարգերը, «Հայագիտության հարցեր», Եր., 2014, N 2, էջ 121-139, Մույնի Հայական բաղաձայնների հնդեվրոպական համակարգը, «Վեմ», Եր., 2019, N 2, էջ 107-136, Մույնի Հին հայերենի ձայնել հպականների տարածամանակյա բնութագրերը, «ԲԵՀ. Բանասիրություն», Եր., 2019, N 1, էջ 39-48 և այլն): Այստեղ կբավարարվենք միայն նշելով, որ նույնիսկ ավանդական համեմատական հնդեվրոպաբանության ներկայացուցիչներից շատերը հնարավոր չեն համարել ընդհանուրհնդեվրոպականում շնչել խուլերի որպես ինքնուրույն հնչույթային կարգի վերականգնումը (**P/h*], **T/h*], **K/h*), որովհետև, նրանց կարծիքով, հատկապես *centum* (արևմտյան) խմբի լեզուները դրա համար բավարար հիմքեր չեն տալիս (տե՛ս Meie A., Введение..., էջ 109-116, Семеренья О., նշվ. աշխ., էջ 160-161, Савченко А. Н., նշվ. աշխ., էջ 58-80, Красухин К. Г., Введение в индоевропейское языкознание, М., 2004, էջ 55): Ա. Մեյեն, որը և *h*-*ե*. հպականների երեք հնչույթային կարգ շնչել ձայնել (**B/h*]), պարզ ձայնել (**B*) և պարզ խուլ (**P*), վերականգնելու կողմնակից էր, չորրորդի շնչել խուլերի (**P/h*]) կարգի վերականգնումը հնարավոր է համարել *h*-*ե*. բարբառների միայն որոշակի խմբի համար հունարենի, հայերենի և հնդիրանականների (տե՛ս Meie A., Введение..., էջ 116): Իհարկե, հպականների երեք հնչույթային կարգ են վերականգնել նաև հնդեվրոպաբանության համեմատաբար նոր փուլի (20-րդ դարավերջի) մի շարք նշանավոր ներկայացուցիչներ (Թ. Գամկրելիձե, Վյաչ. Իվանով, Պ. Հուպեր, Ֆ. Կորուանդ և ուրիշներ), բայց նրանք առաջարկել են միանգամայն այլ ավանդականից սկզբունքորեն տարբեր հայեցակարգ(եր) (տե՛ս Պետրոսյան Վ., Հայական բաղաձայնների հնդեվրոպական և հայկական համակարգերը, էջ 121-139, Մույնի Հայական բաղաձայնների հնդեվրոպական..., էջ 107-136): Մյուս կողմից՝ համեմատական հնդեվրոպաբանության նոր փուլում ևս կային հպականների չորս հնչույթային կարգի կողմնակիցներ: Նրանցից էին Ժ. Օդրին, Լ. Գերցենբերգը և Գ. Տահուկյանը (տե՛ս Օдри Ж., Индоевропейский язык. «Новое в зарубежной лингвистике», вып. XXI, М., 1988, էջ 28-30, Герценберг Л. Г., Краткое введение в индоевропеистику, С.-П., 2010, էջ 16-25, 29-31, Տահուկյան Գ. Բ., ՀԴԿԼԺ, էջ 37-38):

31 Տե՛ս Meie A., Основные особенности..., էջ 40:

լիս ասելու, որ հյ. *hu* (*x*)-ի բուն (ըստ էության՝ միակ) նախաձևը հ.-ե. հետնալեզվային շնչեղ խուլ հպական էր՝ **k^h*, որը հ.-ե. հետնալեզվային խուլ հպական հնչույթի՝ **K^{/h/}*-ի շնչեղ ենթահնչույթն էր կամ դիրքային տարբերակը:

Վարդան Զ. Պետրոսյան – հեղինակ է 2 գրքի և ավելի քան 50 հոդվածի: Գիտական հետաքրքրությունների տիրույթում են համեմատական հնդեվրոպաբանության, պատմահամեմատական հայերենագիտության, ընդհանուր լեզվաբանության, ընդհանուր և հայ հնչույթաբանության հիմնահարցերը:

Էլ. հասցե՝ vz.petrosyan@ysu.am

Summary

ANACHRONISTIC AND DIACHRONIC DESCRIPTION OF OLD ARMENIAN VOICELESS FRICATIVE *ħ* (X)

Vardan Z. Petrosyan

Candidate of Sciences in Philology

Key words – voiceless fricatives, back-lingual, Old Greek, Old Slavonic, Hittite and Luwian languages, consonant movements, typological approach, diachronic approach, Spiritus asper.

Similar to historical-comparative Armenological Studies, the linguistic tradition of other Old Indo-European languages possessing *x* (*kh*) (Iranian and German old languages, Hittite, Old Greek, Old Slavonic, Lithuanian, etc.) maintain that the phoneme has developed from the Indo-European aspirated voiceless (**k^h*) (in our opinion, it derives from **k^h*, one of the two major positional variants of the IE aspirated voiceless back-lingual phoneme *K^{/h/}*).

It is worth mentioning that 1) this is one of the few instances when a single IE prototype is restored for a certain phoneme (in this case – *x* (*kh*) in Armenian and other languages, 2) Based on the well-accepted “consonant movement” in classical typology, i.e., according to the standard phonemic transitions both in Armenian and in other languages, the phoneme could not have developed into *x* (*kh*). Instead, it should have developed into *p* (*k*)

since the IE category of aspirated voiceless sounds could not have undergone any changes, i.e., no “movement” could have taken place, which we witness in the case of labial and dental phonemes (comp. $ph > \psi (p')$, $*th > \theta (t')$). However, the fact that the $k > x (kh)$ transition is typical of not only IE languages, but rather is of general linguistic, more precisely, a typological nature (the phonemic transitions from back-lingual voiceless occlusives ($q / k / \underline{k} / k$), fricatives into Armenian $\text{խ} (x)$ in the Armenian borrowings from non IE languages like Semitic and Caucasian can prove the idea stated). This comes to confirm the high probability of the transition from the IE $*k^h$ to Armenian $\text{խ} (x)$, on the one hand, and of the original phonetic, rather than phonemic nature of this change, on the other hand.

Following one of the most probable explanations, the transition from the back-lingual voiceless occlusive k^h to the back-lingual voiceless fricative $\text{խ} (x)$ could have been possible due to the opening of a narrow passage rather than an explosion of the glottis, which is specific to the pronunciation of occlusives (A. Meillet).

However, we hold the opinion that the explanation could be more complete if we acknowledged the importance of the common and no less important feature necessary for the articulation of all the above mentioned phonemes – their back-lingual position.

Резюме

АХРОНИЧЕСКИЕ И ДИАХРОНИЧЕСКИЕ ХАРАКТЕРИСТИКИ ДРЕВНЕАРМЯНСКОГО ГЛУХОГО ФРИКАТИВНОГО $\text{խ} (X)$

Вардан З. Петросян

Канд. филол. наук

Ключевые слова - глухой фрикативный, заднеязычный; древнегреческий, древнеславянский, хетто-лувийские языки; передвижение согласных; типологический подход; диахрония; твердое дыхание.

Как в сравнительно-историческом арменоведении, так и в языковедческой традиции других индоевропейских языков (хеттском, древнегреческом, древнеславянском, литовском, иранских, древнегерманских и др.),

имеющих x (kh), этой фонеме приписывается происхождение от и.-е. глухого придыхательного заднеязычного ($*k^h$) (по нашему мнению, от $*k^h$, который является одним из двух основных позиционных вариантов и.-е. глухой придыхательной заднеязычной фонемы $*K^{[h]}$). Причем: 1) это один из тех немногих случаев, когда для какой-либо фонемы армянского и других языков (в данном случае для x (kh)) восстанавливается одна праформа; 2) эта фонема, согласно принятому в классической компаративистике «передвижению согласных», то есть представлениям о пропорциональных звуковых переходах, как в армянском, так и в других языках, абсолютно не могла дать x (kh), а только φ (k'), потому что разряд глухих смычных придыхательных не должен был подвергнуться изменениям, то есть таких «передвижений», какие мы видим в случае губных и зубных (ср. $*ph > \varphi$ (p'), $*th > \vartheta$ (t'), не должно было быть. Однако тот факт, что звуковой переход $k > x$ (kh) свойственен не только индоевропейским языкам, но также имеет общезыковедческое, а точнее типологическое свойство (свидетельством этого являются осуществленные звуковые (фонемные) переходы «заднеязычный глухой смычный ($q / k / k / k$) / фрикативный ($h / h / h / \gamma$) > арм. խ (x)» в заимствованиях из неиндоевропейских языков – семитского, кавказского в армянском) свидетельствует, с одной стороны, о большой вероятности перехода и.-е. $*k^h >$ арм. խ (x), с другой стороны – о наличии первоначально фонетического (а не фонологического) свойства данного звукоизменения. Согласно одному из вероятных объяснений, переход от глухого заднеязычного смычного k^h к заднеязычному глухому фрикативному խ (x) мог произойти не при взрыве клапана звуковой щели, что присуще артикуляции смычных, а вследствие преодоления раскрытия этой щели (А. Мейе). По нашему мнению, однако, объяснение будет полноценным, если примем во внимание, что в процессе чередования не менее важным было общее для всех отмеченных звуков (фонем) свойство – заднеязычность.

REFERENCES

1. **Abaev V. I.**, O proiskhozhdenii fonemy γ (h) v slavyanskom, “Problemy indoevropeyskogo yazykoznaniiya”, M., 1964 (In Russian).
2. **Aghayan E.**, Meghru barbařy, Yer., 1954 (In Armenian).
3. **Ačarjan H.**, K'nnut'yun Agulisi barbaři, Yer., 1935 (In Armenian).
4. **Ačarjan H.**, Hayots' lezvi patmut'yun, mas 1, Yer., 1940 (In Armenian).
5. **Ačarjan H.**, Liakatar k'erakanut'yun hayots' lezvi, hat. 6, Yer., 1971 (In Armenian).
6. **Ačarjan H.**, Hayeren armatakan bařaran, hat. 2, Yer., 1973, hat. 3, Yer., 1977 (In Armenian).

7. **Ačařyan H.**, K'nnut'yun Vani barbari, Yer., 1953 (**In Armenian**).
8. **Avanesov R. I.**, Ocherki russkoy dialektologii, ch. 1, M., 1949 (**In Russian**).
9. **Benvenist E.**, Problemy armyanskogo konsonantizma, "Voprosy yazykoznanaiya", 1961, N 3 (**In Russian**).
10. **Bernshteyn S. B.**, Ocherk sravnitel'noj grammatiki slavyanskikh yazykov, M., 1961 (**In Russian**).
11. **Gerts'enberg L. G.**, Kratkoe vvedenie v indoeuropeistiku, S.-P., 2010 (**In Russian**).
12. **Ghap'ants'yan G. A.**, Hayots' lezvi patmut'yun: hin shrdzhan, Yer., 1961 (**In Armenian**).
13. **Gukhman M. M.**, Got'skij yazyk, M., 1958 (**In Russian**).
14. **Djaukyan G. B.**, Ocherki po istorii dopis'mennogo perioda armyanskogo yazyka, Yer., 1967 (**In Russian**).
15. **Djaukyan G. B.**, Hay barbarağitut'yan neratsut'yun, Yer., 1972 (**In Armenian**).
16. **Djaukyan G. B.**, Sravnitel'naya grammatika armyanskogo yazyka, Yer., 1982 (**In Russian**).
17. **Djaukyan G. B.**, Hayots' lezvi patmut'yun: nakhgrayin zhamanakashrdzhan, Yer., 1987 (**In Armenian**).
18. **Djaukyan G.**, Hayeren stugabanakan bařaran, Yer., 2010 (**In Armenian**).
19. **Khamburgaev G. A.**, Staroslavjanskij yazyk, M., 1974 (**In Russian**).
20. **Krasukhin K. G.**, Vvedenie v indoeuropeyskoe yazykoznanie, M., 2004 (**In Russian**).
21. **Hyubshman H.**, Hayagitakan usumnasirut'yunner, Yer., 2004 (**In Armenian**).
22. **Markosyan R.**, Araratyan barbar, Yer., 1989 (**In Armenian**).
23. **Meye A.**, Vvedenie v sravnitel'noe izuchenie indoeuropejskikh yazykov, M.-L., 1938 (**In Russian**).
24. **Meye A.**, Obshcheslavyanskij yazyk, M., 1951 (**In Russian**).
25. **Meye A.**, Osnovnye osobennosti germanskoj gruppy yazykov, M., 1952 (**In Russian**).
26. **Meye A.**, Hayagitakan usumnasirut'yunner, Yer., 1978 (**In Armenian**).
27. **Muradyan H. D.**, Hayots' lezvi patmakan qerakanut'yun, hat. I, Yer., 1982 (**In Armenian**).
28. "Nor bařirk' haykazean lezui", hat. II, 1981 (**In Armenian**).
29. **Odri Zh.**, Indoeuropeyskij yazyk, "Novoe v zarubezhnoj lingvistike", vyp. XXI, M., 1988 (**In Russian**).
30. **Pedersen H.**, Npast my hay. lezui patmut'yan, Vienna, 1904 (**In Armenian**).
31. **Petrosyan V. Z.**, Hin hayereni ι (I) yev η (I) dzaynordneri tsağumy yev hnchabanakan arzhek'aynut'yuny, "Vēm", Yer., 2017, N 3, edž 97-105 (**In Armenian**).
32. **Petrosyan V. Z.**, Hpakan baghadzaynneri hndevropakan yev haykakan hamakargery, "Hayagitut'yan hats'er", Yer., 2014, N 2, edž 121-139 (**In Armenian**).
33. **Petrosyan V.**, Hpakan baghadzaynneri hndevropakan hamakargery, "Vēm", Yer., 2019, N 2, edž 107-136 (**In Armenian**).
34. **Petrosyan V.**, Hin hayereni dzaynegh hpakanneri tarazhamanakya bnut'agrery, "BEH: Banasirutyun", Yer., 2019, N 1, edž 39-48 (**In Armenian**).
35. **Prokosh E.**, Sravnitel'naya grammatika germanskikh yazykov, M., 1954 (**In Russian**).
36. **Rastorgueva V. S.**, Drevneiranskie yazyki (avestijskij i drevnepersidskij), "Yazyki Azii i Afriki", t. II, M., 1978 (**In Russian**).
37. **Savchenko A. N.**, Sravnitel'naya grammatika indoeuropeyskikh yazykov, M., 1974 (**In Russian**).
38. **Selishchev A. M.**, Staroslavjanskij yazyk, ch. I, M., 1951 (**In Russian**).
39. **Semerenti O.**, Vvedenie v sravnitel'noe yazykoznanie, M., 1980 (**In Russian**).

40. **Serebrennikov B. A.**, Veroyatnostnye obosnovaniya v komparativistike, M., 1974 (**In Russian**).
41. **Trubets'koy N. S.**, K istorii zadneneznykh v slavyanskikh yazykakh, **Trubets'koy N. S.**, Izbrannye trudy po filologii, M., 1987 (**In Russian**).
42. **Vayan A.**, Rukovodstvo po staroslavlyanskomu yazyku, M., 1952 (**In Russian**).
43. **Zhuravlev A. M.**, Pedersena zakon, “Lingvisticheskij enc'iklopedicheskij slovar”, M., 1990 (**In Russian**).